

PROVYSHY
VNUZLORNYE

ԳՈՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

PROԱԿՏԻՎ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Ինչպես ոգեշնչել, միավորել, փոխակերպել



ԵՐԵՎԱՆ
2024

ՀՏԴ 316.46
ԳՄԴ 60.524.225
Կ 294

Կ 294 Կարապետյան Գոռ
Քրակտիվ առաջնորդը: Ինչպես ոգեշնչել, միավորել, փոխակերպել /
Գ. Կարապետյան.- Եր.: Newmag, 2024.- 200 էջ:

Այս գիրքը պրոակտիվ առաջնորդության մասին է: Առաջնորդություն, որտեղ փոքր դերը ծառայեցվում է մեծ նպատակին՝ լինի բիզնես, կրթություն, թե որևէ այլ ոլորտ: Գիրքը նաև կոչ է անում համատեղ փնտրել լուծումներ, հաղթահարել ֆունկցիոնալ անգրագիտությունը, բարձրացնել սոցիալական պատասխանատվության և կրթության ցածր մակարդակը: Հեղինակն ընդգծում է ֆունկցիոնալ առաջնորդության, մենթորության և հոգատարության միջոցով դրական փոփոխություններ առաջ բերելու կարևորությունը:

Հիմնվելով միջազգային, տեղական ու անձնական փորձի վրա՝ հեղինակը մշակել և առաջարկում է գործուն մեթոդներ ու պրակտիկ խորհուրդներ, որոնք օգտակար կլինեն հետաքրքրասեր և ուսումնասիրող պատանիներին ու երիտասարդներին: Գիրքը նաև օգնում է բացահայտել դրական փոփոխությունների ունիվերսալ ալգորիթմը:

Գրքում նկարագրված են բիզնեսի, կրթության և այլ ոլորտների գլոբալ ու լոկալ ազդեցիկ օրինակներ, որոնց շնորհիվ պրոակտիվ առաջնորդությունը զգալի փոխակերպումներ է առաջ բերել մեծ ու փոքր համայնքներում և էկոհամակարգերում:

Գիրքը ևս մեկ ապացույց է, որ արդյունավետ ու պրոակտիվ առաջնորդ չեն ծնվում, այլ դառնում են: Մոտիվացիայի մասին խոսելն ավելորդ է դառնում, երբ իսկապես գիտես «ի՞նչ», «ինչպե՞ս» և հատկապես «ինչո՞ւ» հարցերի պատասխանները: Այս գրքում կգտնես նաև այդ հարցերի պատասխանները:

ՀՏԴ 316.46
ԳՄԴ 60.524.225

Գրքի գլխավոր գործընկեր՝
ՎՏԲ-Հայաստան Բանկ
vtb.am



ISBN 978-9939-967-23-3

Գոռ Կարապետյան, «Քրակտիվ առաջնորդը» © 2024, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն հրատարակության բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել հեղինակի ընկերության հետ կնքած պայմանագրով:

Բովանդակություն

Նախաբան 9

Առաջնորդության պարադոքսը. Երբ կարիքը հենց կոչումն է

Գլուխ 1	Ֆունկցիոնալ անգրագիտության «անտեսանելի ձեռքը» կամ խավարամտության էպիդեմիան 19
Գլուխ 2	Մի՛ եղիր ուրագի պես, կամ՝ հաղթահարելով անտարբերության համախտանիշը 37
Գլուխ 3	Ալարբալանիցա. ո՞վ է մեղավոր, կամ ինչպե՞ս է բողոքը «կազմաքանդում մեր ներսը» 53
Գլուխ 4	Ֆրանկլինի էֆեկտը. Երբ հակառակորդը պոտենցիալ ընկեր է 63

Առաջնորդության արքիմիան. սահմանափակ դերի վերածումը մեծ նպատակի

Գլուխ 5	Ֆունկցիոնալ առաջնորդություն. հաղթահարելով ալֆա առաջնորդի բարդույթը 77
Գլուխ 6	Ինչո՞ւ դառնալ մենթոր, երբ կա Google-ը, ChatGPT-ն ու հատկապես TikTok-ը 91
Գլուխ 7	Ապագայի կարևորագույն հմտությունը, կամ ինչպե՞ս սովորել սովորել 101
Գլուխ 8	Մենթորությունը հանաք բան չէ, բայց քեզնից հեռու էլ չէ 113

**Առաջնորդություն առանց ֆիլտրի.
ուզում ես լինել առաջինը՝ ծառայիր**

Գլուխ 9	Մեծ եղբոր փոքր քայլերի կարևորությունը	121
Գլուխ 10	Բիզնեսն առանց մենթորի, ինչպես նաև առանց առագաստի	141
Գլուխ 11	Դոմինոյի էֆեկտը կամ համայնքների փոխակերպումը	153
Գլուխ 12	Փոփոխությունների տեսություն կամ ցտեսություն անփոփոխությանը	161
Վերջաբան	175
Հավելված 1	Մենթորության հարթակներ	177
Հավելված 2	Մենթորական գործիքներ	183
Հավելված 3	Մենթորի ուղեցույց	185
Հավելված 4	Մենթորի ուղեցույց	189
Երախտագիտության խոսք		193
Ծանոթագրություններ		195

Նվիրվում է իմ խոսքը, վարքն ու օրինակն
ամենօրյա ռեժիմով ստուգող ամենախիստ ու անկաշառ
հանձնախմբին՝ ընտանիքիս՝ կնոջս ու զավակներին:

ՆԱԽԱԲԱՆ

Նրանք չորսն էին՝ «Ամեն մեկը», «Ինչ-որ մեկը», «Ցանկացած մեկը» և «Ոչ մեկը»: Երբ ինչ-որ կարևոր գործ կար անելու, «Ամեն մեկը» վստահ էր, որ «Ինչ-որ մեկը» դա կանի: «Ցանկացած մեկը» կարող էր դա անել, բայց «Ոչ մեկը» ոչինչ չէր անում: «Ինչ-որ մեկն» անընդհատ բողոքում էր, քանի որ դա «Ամեն մեկի» պարտքն էր համարում: «Ամեն մեկը» կարծում էր, որ «Ցանկացած մեկը» կարող է դա անել, բայց «Ոչ մեկը» չէր գիտակցում, որ «Ամեն մեկը» դա չի անելու: Ի վերջո, «Ամեն մեկը» սկսեց մեղադրել «Ինչ-որ մեկին», երբ «Ոչ մեկը» չարեց այն, ինչ «Ցանկացած մեկը» կարող էր անել:

Այս առակը պատասխանատվության, պարտավորության, գիտակցության և վճռականության բացակայության մասին է: Առակը պատասխանատվության պարադոքսի մասին է, որի առանցքային գաղափարն ավելի քան ակնհայտ է. «Երբ ոչ մեկը չի ստանձնում գործելու պատասխանատվությունը, ոչինչ էլ տեղի չի ունենում»:

Նույնիսկ ամենափոքր պատասխանատվություններից անընդհատ խուսափելն ակնհայտ զգուշացնող ազդանշան է, որ շուտով մտնելու ես մեծ փակուղի:

Քո, իմ և մեկ ուրիշի կյանքում փոփոխությունը տեղի է ունենում, երբ դրան նախորդում է գիտակցված պահանջ, որը զուգորդվում է պատասխանատվություն ստանձնելով, որն էլ վերածվում է հստակ գործողության:

Կարող ես մտաբերել՝ երբ ես զգալի առաջընթաց գրանցել կամ հասել նպատակիդ: Դա պատահականությանն արդյունք էր, թե՛ նպատակը հետևողականորեն իրագործելու որոշում:

Այս գիրքն առաջնորդության մասին է: Այն ենթադրում է փոփոխություն, որն էլ պահանջում է գիտակցված ցանկություն, պատասխանատվություն ստանձնելու պատրաստակամություն և քայլեր անելու պարտավորություն: Երբ այս երեք բաղկացուցիչները միավորվում են, կարող են իսկապես հզոր փոխակերպումներ տեղի ունենալ և անձնական, և գործնական միկրո ու մակրո մակարդակներում:

ՅՈՒՐԱՔԱՆՅՈՒՐ

Մեր յուրաքանչյուր գործողություն ունենում է ալիքային ազդեցություն. ակամա հաղորդիչ ենք կամ ընդունիչ, ազդակ ենք կամ արձագանք, դառնում ենք պատճառը կամ պարզապես կրում ենք հետևանքները: Կարող ենք լինել դրական փոփոխությունների առիթ կամ զգալ մեր անգործության հետևանքները:

Բիզնեսում ռիսկի ես դիմում՝ աճելու նպատակով, կամ էլ անվտանգ ու ապահով խաղ ես վարում՝ հետագայում ստիպված արձագանքելով այն ամենին, ինչ անում են մրցակիցներդ:

Նույնն էլ՝ կյանքում. դու կամ որոշումներ ես կայացնում, որոնք նախանշում են քո ուղին, կամ թույլ ես տալիս, որ հանգամանքները թելադրեն քո ճակատագիրը: Այսպիսով, ընտրությունը քոնն է՝ լինել հաղորդիչ, թե՛ ընդունիչ, գործել պատճառների, թե՛ հետևանքների տիրույթում:

ՄԱԿԵՐԵՍԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԽՈՐԸ «ԳՈՂԱԿԱՆԻ» ՄԻՋԵՎ

Էյնշտեյնն ասում էր, որ մենք չենք կարող լուծել խնդիրը՝ մնալով մտածողության այն մակարդակում, որի վրա այն ստեղծել ենք: Բազմաթիվ խնդիրներ և դրանցից բխող հետևանքներ, որոնց մենք բախվում ենք ամեն օր, առաջացել են մտածողության մի մակարդակում, երբ անձնային շահն ու «գործ կպցնելու», «փող սարքելու» մտայնությունը տևական ժամանակ ձևավորել են որոշ պաշտոնյաների, քաղաքական գործիչների, գործարարների և հասարակական գործիչների վարքը:

Մենք սահուն հայտնվել ենք երկու բևեռների՝ 17-ամյա լայֆ-քուլչ թինեյջերների և 60-ամյա «մոտիկից իսկական գող տեսած» հասուն տղամարդկանց միջև, ինչի պատճառով մեր հասարակության մեջ ծայրահեղություններն ու տարօրինակությունները հաճախ շատ են: Մեր զավակների մի մասը մեծանում է այս միջավայրում ու պայմաններում: Կրթության հարցում մեր ձախողումը մեծ է: Մեր դպրոցներն ու բուհերը թերացել և թերանում են որակյալ ու ժամանակակից կրթություն ապահովելու գործում: Չախողման հիմնական պատասխանատուն պետական ինստիտուտներն են, ինչը խոստովանում են հենց պաշտոնյաները:

ԿԳՄՍ նախարար ժաննա Անդրեասյանն ասել է. «...Մեր երեխաներն այսօր, ամբողջությամբ անցնելով 12-ամյա հանրակրթությամբ, եթե լավ սովորեն, ապա իրենց կարողությունները կկարողանան իրացնել 57 տոկոս կամ կեսից մի փոքր ավելի: Ինչ-որ առումով, դպրոցի ավարտին, փաստորեն, մեր չիրացվածությամբ մնում ենք կիսամարդ կամ կիսաքաղաքացի»²:

Զգացի՞ք, թե ինչպես «Ինչ-որ մեկը» սկսեց մեղադրել «Ցանկացած մեկին», և «Ոչ մեկը» չարեց այն, ինչն «Ամեն մեկը» կարող էր անել: Բայց վաղուց է եկել այդ մտայնությունը փոխելու ժամանակը: Ու դա անորոշ «Ինչ-որ մեկը» չպետք է անի, այլ հստակ անձինք՝ ԵՍ և ԴՈՒ: ՄԵՆՔ: ԵՍ:

ԻՆՉՈՒՒ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ԳԻՐՔԸ

Ես ուզում եմ դրական ազդակ լինելու պարտավորություն ստանձնել. դա իմ պարտավորությունն է: Կարծում եմ՝ ընդհանրապես, իսկ այս հարցում՝ մասնավորապես, մոտիվացիայի մասին խոսելն ավելորդ է դառնում, երբ իսկապես գիտես «ի՞նչ», «ինչպե՞ս» և հատկապես «ի՞նչո՞ւ» հարցերի պատասխանները: Եվ, հիմնվելով միջազգային, տեղական ու անձնական փորձի վրա, մշակել եմ գործուն մեթոդներ ու պրակտիկ խորհուրդներ, որոնք օգտակար կլինեն նաև քեզ համար: Դու էլ կստանձնես քո պարտավորությունը: Իրար գումարենք մեր ուժերը, ու կտեսնես՝ որն է «Հայկական հրաշքը»:

Ցանկանում եմ նաև մի քանի հարյուր կամ հազար համակիր և գաղափարակից գտնել, որոնք կհամաձայնեն «Ոչ մեկի» կարգավիճակից տեղափոխվել «Ամեն մեկի» կարգավիճակի:

Այս գիրքն առաջնորդության մասին է: Առաջին համարձակ քայլն անող ինչ-որ մեկի և ոչ թե դափնիներ վաստակածի կամ վաստակողի:

Ավելի ստույգ՝ ֆունկցիոնալ առաջնորդության, մենթորության և հոգատարության միջոցով դրական փոփոխություններ առաջ բերելու մասին է:

Հուսով եմ՝ դու էլ ես ցանկանում մեր հասարակության մեջ կամ քո շրջապատում դրական փոփոխություն առաջացնելու պատասխանատվություն և պարտավորություն վերցնել: Իրական առաջնորդները չեն սպասում, թե երբ կգործեն ուրիշները: Նրանք, առաջին քայլը կատարելով, իրենց ձեռքն են վերցնում իրավիճակը փոխելու կարևոր պատասխանատվությունը:

Լուրջ զրույց է սպասվում, բայց խոստանում եմ՝ այն կլինի ինտերակտիվ, հետաքրքիր և արդյունավետ. ամեն դեպքում, որպես զրուցակից՝ ես այդպես եմ տրամադրված:

Հատուկ նշումներ արա սմարթֆոնիդ կամ նոթատետրիդ մեջ, քանի որ թերթելով էջերն առանց դրանցից քո մասը պոկելու՝ շատ օգուտ չես քաղի: Հատուկ նշումներին թող հաջորդեն համապատասխան հատուկ գործողությունները: Հենց այս տրամաբանությամբ էլ ամփոփվելու է յուրաքանչյուր գլուխը:

Եթե հասարակության այն խմբի մեջ ես, որն իսկապես ուզում է դրականորեն ազդել շրջապատի ու հասարակության վրա, ապա ճիշտ տեղում ես, իսկ եթե այդ մասին երբեք չես էլ մտածել, ապա բարի գալուստ: Միասին կհասնենք այն կետին, երբ միայն մի հարց կմնա՝ երբ սկսել:

Այս գրքում մենք կանդրադառնանք մեր երկրի առջև ծառայած այն խնդիրներին, որոնք կարող է լուծել առաջնորդությունը: Համատեղ լուծումներ կփնտրենք՝ հաղթահարելու համար ֆունկցիոնալ անգրագիտությունը, բարձրացնելու համար սոցիալական պատասխանատվության և կրթության ցածր մակարդակը, կփոսենք անձնական պատասխանատվության և նախաձեռնողականության կարևորության մասին:

Կփորձենք հասկանալ, թե ինչ կարելի է անել՝ այս ամենի բացասական հետևանքները փոքր-ինչ մեղմելու և իրավիճակի վրա դրականորեն ազդելու համար: Ֆունկցիոնալ առաջնորդության, մենթորության և հոգատարության ուժը մեզ համար կդառնա արդյունավետ առաջնորդության և սոցիալական փոփոխությունների հիմնական գործիք:

Մեզ կօգնեն բիզնեսի և կրթության ոլորտներում եղած գլոբալ ու լոկալ օրինակները, երբ հոգատարության և մենթորության միջոցով առաջնորդությունը զգալի արդյունքներ է գրանցել մեծ ու փոքր համայնքներում:

ԲԱՅՑ ԴՈՒ ԻՆՉ ԿԱՊ ՈՒՆԵՍ

Գուցե հարց առաջանա՝ այս ամենը, ի վերջո, ինչ կապ ունի քեզ հետ: Շարունակի՞ր կարդալ և կգտնես նաև այս հարցի պատասխանը: Մենք կփորձենք քեզ համար ապահովել բոլոր անհրաժեշտ սկզբունքները, հարթակներն ու մեթոդները, որոնք կարող են քեզ արդյունավետ առաջնորդ դարձնել ամեն մի թիմում, որևէ բիզնեսում և տարբեր համայնքներում:

Իմ նպատակն է ոգեշնչել ու ոգեշնչվել, սպառազինել և սպառազինվել՝ դառնալու համար այն առաջնորդը, որը կարող է մենթորության ու հոգատարության միջոցով ազդեցություն ունենալ շրջապատող միջավայրի վրա: Առաջնորդությունն առաջինը գործելու համարձակությունն է, որին արդեն նախորդել է պատասխանատվության գիտակցված ստանձնումը, ու պիտի հաջորդի անսասան վճռականությունը: Ընդամենը պետք է, սեփական անձի ու դերի վրա կենտրոնանալու փոխարեն, կենտրոնանալ մեծ նպատակի վրա:

Դրական փոփոխությունների ալգորիթմն այժմ իսկապես կարող է գործել: Եթե դու էլ ես լրջորեն տրամադրված այն բացահայտելուն, ապա միասին շարժվենք առաջ:

ամբողջական գիրքն այստեղ է՝

Bookmark 